Հավելված N 1
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 1-ի N 1859 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

Ծրագրային դասիչը		Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի և միջոցառումների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
			տարի
ծրագիրը	միջոցառումը	ԸՆԴԱՄԵՆԸ՝	
		Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	-
1007		Ծրագրի անվանումը՝	-
		Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգում	
		Ծրագրի նպատակը՝	
		Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովում, տեսալսողական ոլորտի վերահսկում և կարգավորում	
		Վերջնական արդյունքի նկարագրությունը՝	
		Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության բարձր մակարդակ, մրցակցային հավասար պայմաններ, տեսալսողական ոլորտում օրինախախտումների նվազեցում, հեղինակային իրավունքների պահպանություն, ոլորտի համաչափ զարգացում	

Ծրագրի միջոցառումներ			
	11001	Միջոցառման անվանումը՝	(1,322.1)
		Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգման ծառայություններ	
		Միջոցառման նկարագրությունը՝	
		Տեսալսողական մեդիայի ոլորտի քաղաքականության, նորմատիվ իրավական ակտերի մշակում, հեղինակազորում, մրցույթների անցկացում, լիցենզիաների տրամադրում, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատում, մշտադիտարկման գործընթաց, տեխնիկական պահանջների կատարման վերահսկողություն, վարչական վարույթների իրականացում	
		Միջոցառման տեսակը՝	
		Ծառայությունների մատուցում	
	31001	Միջոցառման անվանումը՝	1,322.1
		Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում	
		Միջոցառման նկարագրությունը՝	
		Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ վարչական սարքավորումների ձեռքբերում	
		Միջոցառման տեսակը՝	
		Պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

02.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ